ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Լ. ՕՐԲԵԼԻՆ ԸՆՏՐՎԵԼ Է ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՎԱՎՈՐ ԱՆԴԱՄ

ԼԵՆԻՆԳՐԱԴ, 25 մայիսի (ՏԱԱՍ). — Այսօր անգլիական ֆիզիոլոգիական ընկերության քարտուղար պրոֆեսոր Բրոունից ստացվել է մի նամակ։ Նամակում հայտնվում է, որ սովետական ֆիզիոլոգների ղեկավար Սոցիալիստական Աշխատանքի Հերոս ակադեմիկոս Լ. Ա. Օրբելին ընտրվել է ընկերության պատվավոր անդամ։ Միաժամանակ Փարիզից հաղորդագրություն է ստացվել. ֆրանսիական բժշկական ակադեմիայի գլխավոր քարտուղար պրոֆեսոր Պիերոնից ակադեմիկոս Օրբելուն այդ ակադեմիայի օտարերկրյա անդամ ընդունելու մասին։